217

1. Եթե դժվարության հանդիպես
Կամ թե մարդկանցից
արհամարհվես,
Ինչքան էլ ծանր վիճակ լինի,
Երբեք ոչ ոքի մի՛ մեղադրիր:
Եթե ծաղիկները թառամեն,
Եվ տերևները ծառից թափվեն,
Իսկ սրտումդ կրակը հանգչի,
Երբեք ոչ ոքի մի՛ մեղադրիր:

2. Թե էլ արևը քեզ չփայլի,
Եվ կյանքիդ օրերը խավարեն,
Եվ զգաս սառնություն սրտիդ մեջ,
Մի՛ մեղադրիր ոչ ոքի երբեք:
Թե ճամփիդ ծաղիկներ չլինեն,
Այլ միայն սուր քարեր
հանդիպեն,
Իմ եղբա՛յր, այս խոսքը դու
հիշիր.
Երբեք ոչ ոքի մի՛ մեղադրիր:

3. Եթե դու մենակ ես ու լքված,
Ինչպես ծովում նավը
ջախջախված,
Էլ պիտանի չես ոչ մի բանի,
Դարձյալ ոչ ոքի մի՛ մեղադրիր:
Թե աչքերիցդ հորդ արցունք
թափվի,
Ուրախության հույսը կտրվի,
Այս խոսքերը դու սրտիդ մեջ
դի՛ր,
Երբեք ոչ ոքի մի մեղադրիր:

4. Թե նույնիսկ հարազատ ընկերդ
Եվ հանկարծ դրժի իր երդումը,
Քեզ մոռանա և սերը փոխի,
Նրան էլ դարձյալ մի՛ մեղադրիր:
Որովհետև Հիսուս Քրիստոսը
Ներում է բոլորիս մեղքերը,
Հայացքդ միայն Նրան ուղղի՛ր
Եվ Նրա նման դու էլ ների՛ր:

5. Թե ուզում ես երջանիկ լինել
Եվ մարդկանց օրինակ ծառայել,
Այդ դեպքում պետք է այսպես
անել՝
Ամենից առաջ քեզ մեղադրել:
Քանզի Հիսուսը, մեզ սիրելով,
Մեր մեղքը Իր վրա վերցնելով,
Խաչի վրա մեզ համար
զոհվեց,
Ինձ և քեզ թողություն
պարգևեց: